Azg Ազգ

12 ՅՈՒՆԻՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 105(4957)

ISSN: 1829-1651

Իսրայելի Քնեսեթում նորից շահարկում են Հայոց ցեղասպանության հարցը

Իսրայելի Քնեսեթը, ըստ «Հաարեց» պարբերականի, այսօր պետք է քննարկի Հայոց ցեղասպանության հարցը լիագումար նիստում: Քննարկումն այսօր իրականացնելու որոշում է կայացրել իսրայելական խորհրդարանի նախագահ Ռեուվեն Ռիվլինը, սակայն, պարբերականի պնդմամբ, քննարկումը բնավ էլ չի նշանակում Հայոց ցեղասպանության ճանաչում: Ավելին, ըստ հրապարակման, մեկ քննարկմամբ հարցը չի ավարտվի, այլ կշարունակվի իսրայելական խորհրդարանի հանձնաժողովներից մեկում:

Քննարկումը նախաձեռնել է «Մերեց» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Զահավա Գալլոնը, փաստացի թարմացնելով դեռեւս նախորդ տարեվերջին իսրայելական խորհրդարանում շրջառության մեջ դրված նույնօրինակ, բայց անարդյունք նախաձեռնությունը:

Իսրայելի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը առաջ է բերվել այնպիսի ժամանակահատվածում, երբ հենց հաջորդ օրը սպասվում է իսրայելական բանակի կողմից «Մավի Մարմարա» թուրքական նավի վրա հարձակման առնչությամբ պետական վերահսկողական զեկույցի հրապարակումը: Եվ դա այն դեպքում, երբ պաշտոնական Անկարան որոշել է միջազգային դատարանում գործ հարուցել ընդդեմ իսրայելցի բարձրաստիճան սպաների:

Իսրայելա-թուրքական հարաբերությունների վատթարացման ֆոնին այսօրինակ ձեռնարկումը Իսրայելի օրենսդիր մարմնում առնվազն անբարեկրթություն է, քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչման հանգամանքը Իսրայելի նման երկրի կողմից ծառայեցվում է Թուրքիայի «սանձերը» քիչ ձգելու նպատակին եւ որեւէ առնչություն չունի արդարության ու ճշմարտության ընկալումներին: Ա. Հ.

Քա ասում էին՝ «զոհեր չունե՞ք»

Pat.az-ը մի «վերլուծական» է հրապարակել, որտեղ փորձել է «գնահատել Ֆիզուլիի ուղղության մարտերը»: Այդ նպատակով ներգրավվել են «ռազմական փորձագետներ եւ նախկին ռազմաճակատային»: Իհարկե, որեւէ անուն վկայակոչված չէ: Այսուհանդերձ, երեւույթն ինքնին հետաքրքրական է:

Աչքի է զարնվում, որ ադրբեջանական կողմը շփման գծի դեմքերը որակում է «մարտեր»: Այնուհետեւ կայքը գրում է, որ «հրադադարի խախտման հետեւանքով թեեւ «հակառակորդը տվել է նշանակալի զոհեր», Ադրբեջանի բանակում նույնպես սպաներ եւ զինվորներ են զոհվել»: Խոսքը, նկատի ունենանք, վերաբերում է ոչ թե առհասարակ շփման գծի եւ հայ-ադրբեջանական սահմանի, այլ մի առանձին տեղամասում՝ Ֆիզուլիի ուղղությունում, ադրբեջանական բանակի կորուստներին:

Ընդ որում, տեղեկատվության մեջ շարքային եւ սպայական կազմի զոհերը նշված են հոգնակի թվով: Հետեւաբար, Ֆիզուլիի ուղղությունում ձեռնարկած դիվերսիոն գործողությունների ընթացքում ադրբեջանական կողմից զոհվել են սպաներ եւ շարքային զինվորներ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը նույն ուղղությունում զոհերի կամ նույնիսկ վիրավորների մասին որեւէ տեղեկություն չի տարածել: Օգտագործվել է ստանդարտ ոճ՝ «բոլոր դեպքերում հակառակորդն ստացել է արժանի հակահարված, ադրբեջանական կողմից կորուստներ չկան»:

Pat.az-ը, մինչդեռ, խոսում է հոգնակի թվով սպանված սպաների եւ շարքայինների մասին: Բայց սույն կայքը նպատակ չի դրել պարզելու, թե ինչո՞ւ իրենց երկրի պաշտպանական գերատեսչությունը մոլորության մեջ է պահում հասարակությանը: Ընդհակառակը, իր հերթին լրատվամիջոցը փորձում է «բացատրել», որ ադրբեջանական բանակը «չի օգտագործել սեփական հնարավորությունները, մարտերում չեն ներգրավվել հրետանի, զրահատեխնիկա եւ օդուժ»:

Անանուն ռազմական «փորձագետն» այդ կապակցությամբ ասել է, որ «դիվերսիոն գործողությունների ժամանակ բացառապես հրաձգային զենք է օգտագործվում, բայց եթե ամեն ինչ հասներ հաջորդ փուլին, ապա ադրբեջանական բանակը գործի կդներ նորագույն սպառազինությունները»: Ըստ երեւույթին ադրբեջանական «ռազմագետները» կանխածրագրած են եղել, որ անախադեմ դիվերսիոն գործողությունները հակադարձելիս զարաբաղյան կողմը կդիմի ծանր զինատեսակների օգնության, ինչը առիթ կտա «զարգացնելու երկրորդ փուլը»:

Այս իմաստով շփման գծի վերջին լարվածությունը հավանաբար Ադրբեջանի համար եղել է «ռազմական գերակշռությունը» փորձարկելու հնարավորություն: Եվ վստահաբար կարելի է ասել, որ փորձարկումը լիովին ֆիասկոյի է ենթարկվել: Դա է վկայում հիշյալ կայքի անանուն «փորձագետի հիմնավորումը», ըստ որի՝ «Ֆիզուլիի շրջանի ռելիեֆը չափազանց աննպաստ է նորագույն զրահատեխնիկա եւ զինատեսակներ գործի դնելու համար»:

Ռելիեֆի տեսակետից շփման ողջ գիծը գրեթե նույնն է: Ուստի կարելի է ենթադրել, որ այն ընդհանրապես ադրբեջանական բանակի համար չափազանց պինդ «ընկույզ» է: Իսկ լարվածության օրերին երկու կողմերում տիրող տրամադրությունների մասին էլ բավական է ասել, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, ամենայն հավանականությամբ հասարակության մեջ իշխող խուճապային տրամադրությունները մեղմելու համար, հանդես էր եկել հաղորդագրությամբ, որտեղ ասված էր, որ «ընդհանուր զորահավաք անցկացնելու անհրաժեշտություն չկա»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Լիդիցեի ողբերգության 70-ամյա տարելիցը

ՀԱԿՈԲ ԱՄԱՏՈՒՆԻ
Պրահա

Հունիսի 10-ին չեխական Լիդիցե գյուղը կրկին մարդաշատ էր: Չեխիայի կառավարության նախագահ **Նեչասը**, խորհրդարանի երկու պալատների ղեկավարությունը, Չեխիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Դոմինիկ Դուկան, Չեխիայում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դեսպանները, այդ թվում՝ Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանը, հարգանքի տուրք մատուցեցին 1942 թվականին նացիստների ոչնչացրած գյուղի բնակիչների հիշատակին: Ծաղկեպսակների պաշտոնական զետեղումից հետո ներկաներին ողջունեց Լիդիցե հուշահամալիրի տնօրեն **Միլոշ Չերվենցլը**, առաջինը ելույթի համար ձայն տալով վարչապետ Նեչասին: «Աշխարհի աչքերը բացվեցին դեռ համակենտրոնացման ճամբարների ու գազախեղդարանների մասին փաստերի հրապարակումից շատ առաջ, երբ տեղի ունեցավ Լիդիցե գյուղի եւ նրա բնակիչների ոչնչացումը, ասաց Չեխիայի վարչապետը, ավելացնելով, որ Լիդիցեի ողբերգության հետեւանքով Անգլիայի եւ Ֆրանսիայի կառավարությունները չեղյալ հայտարարեցին Մյունխենյան պայմանագիրը:

Այնուհետեւ ելույթներ ունեցան Չեխիայի խորհրդարանի երկու պալատների ղեկավարները, հիշատակելով նաեւ Գերմանիայի նախագահի ցավակցական նամակը Չեխիայի նախագահին՝ կապված Լիդիցեի ողբերգության հետ: Չեխիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ, Պրահայի արքեպիսկոպոս կարդինալ **Դոմինիկ Դուկան** իր քարոզում հիշատակեց զոհերին, եւ հատկապես Լիդիցե գյուղի հոգեւոր հովիվ Յոզեֆ Շտեմբերգին, որը մինչեւ վերջ մնացել է եւ կիսել իր համագյուղացիների ճակատագիրը:

Տես էջ 2

ՀՀԿ գործադիրի նիստը՝ հունիսի 13-ին

«Ազգ» ավելի վաղ տեղեկացրել էր, որ հունիսի 11-ից 13-ը տեղի կունենա ՀՀԿ գործադիր մարմնի նիստը, որտեղ առաջարկվելու եւ հաստատվելու է նոր կառավարության կազմը (երեք նախարարներ արդեն իսկ նշանակված են): Մեր տեղեկություններով՝ այդ նիստը կայանալու է վաղը, որը հաջորդ օրը կարող է շարունակվել: Սակայն 13 թվի հանգամանքը կարող է դեր խաղալ, որ այդ նիստը տեղափոխվի առհասարակ հունիսի 14-ին: Մ. Խ.

Մրցանակներ գիտության մշակներին

«Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» ֆեյսբուքյան նախաձեռնության հայտարարած գիտական լրագրության եւ միջազգային գիտական հանդեսներում առավելագույն հղում ունեցող գիտնականների մրցույթների հաղթողների մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ երեկ: Մրցույթները հովանավորում է «Տաշիր» բարեգործական հիմնադրամը: Մրցանակներ ստացան գիտական լրագրության մրցույթի 11 եւ միջազգային գիտական հանդեսներում առավելագույն հղում ունեցող գիտնականների մրցույթի 95 հաղթողներ:

ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար Արտակ Ճաղարյանի ներկայացմամբ՝ գիտության ոլորտում Կարեն եւ Սամվել Կարապետյանները շարունակելու են աջակցություն բերել ամենատարբեր ծրագրերում՝ ոչ միայն խրախուսելու գիտության մշակներին, այլեւ աջակցելու պետությանը:

Հ. Հ.

Վարդան Օսկանյանին հարցաքննո՞ւմ են

Ճիշտ ասած՝ չէինք ուզենա, որ վերադառնար քաղաքական գործիչներին տարբեր քրեական գործերով հետաքննդումներով քաղաքական դաշտից դուրս մղելու տերտերոսյանական ժամանակների գործելակերպը, ու այդ պատճառով երեկ զարմացանք՝ տեղեկանալով, որ ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանին ինչ-որ քրեական գործի շրջանակում կանչում են ԱԱԾ: Ազգային անվտանգության ծառայությունը փողերի լվացման հոդվածի հատկանիշներով («Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը», Քրեական օրենսգրքի 190-րդ հոդված, 3-րդ կետ) որպես վկայի հարցաքննության է հրավիրել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանին:

Երեկ այդ առթիվ հայտարարություն էր տարածել Վ. Օսկանյանը՝ նշելով, թե իրենից որպես վկայի ցուցմունք են վերցնում իր եւ իր հիմնադրած «Սիվիլիթաս» հիմնադրամի գործունեության առնչությամբ. «Հիմնադրման օրվանից՝ «Սիվիլիթաս» հիմնադրամի գործունեությունը եղել է թափանցիկ եւ օրենքի տառին ու ոգուն համապատասխան: «Սիվիլիթասի» գործունեության առաջին օրերից՝ 2008-ից սկսած՝ հիմնադրամին ֆինանսավորել եւ նրա հետ համատեղ ծրագրեր են իրականացրել Նիդեռլանդների եւ Լեհաստանի կառավարությունները, Նորվեգիայի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունները, Շվեյցարիայի եւ Միացյալ Թագավորության զարգացման գործակալությունները, Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը, ինչպես նաեւ այլ հեղինակավոր կազմակերպություններ, կորպորացիաներ եւ անհատներ: Այս ամենի մասին չէին կարող չիմանալ Հայաստանի Հանրապետության համապատասխան կառույցները: Ինձ համար զարմանալի եւ սարսափելի է, որ իմ եւ «Սիվիլիթաս» հիմնադրամի գործունեությունը որեւէ կերպ կարող է շաղկապվել հանցավոր եւ անօրինական փողերի հետ: Առավել զարմանալի է, որ նման հարց առաջ է բերվում հենց այն ժամանակ, երբ ես ներգրավվել եմ քաղաքական գործընթացներում:

Ակնհայտ է, որ հարուցված քրեական գործի հետեւում քաղաքական պատվեր կա», ասված է հայտարարության մեջ: Փաստորեն Օսկանյանը բացահայտ ասում է, որ իրեն ԱԱԾ կանչելը քաղաքական ենթատեքստ ունի, մանավանդ որ ֆեյսբուքյան իր էջում էլ նշել է, որ այդ ձեւը քաղաքական պայքարի իր պատկերացրած ձեւը չէ, սակայն նա դրան եւս պատրաստ է:

Սակայն նշենք, որ հիմա այն ժամանակները չեն, ու զուտ քաղաքական ենթատեքստով քրեական գործ հարուցելիս, մանավանդ Օսկանյանի դեպքում, ու մանավանդ՝ մամուլի ակնդետ հայացքի ներքո, եթե լուրջ փաստեր ու հիմնավորումներ չներկայացվեն, անգամ եթե մնալու լինեն զուտ հարցաքննության մակարդակում, չենք կարծում, որ ԱԱԾ-ի օգտին կլինի սպասվելիք աղմուկը:

Մ. Խ.

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Քլինթոնը վերադարձավ եւ հեսաֆնության մասին տեղեկություն տարածվե՞ց

The Washington Times-ը հոդված է հրապարակել, ըստ որի Սպիտակ տնից տեղեկատվական արտահոսքի կապակցությամբ, որը «կործանիչ նշանակություն է ունեցել» Միացյալ Նահանգների համար, հեսաֆնությունն է սկսվել: «Կործանիչ նշանակության» արտահոսքը, ըստ այդմ, վերաբերում է մամուլի հրապարակումներին, թե «Ադրբեջանը համաձայնել է իր օդանավակայանները տրամադրել Իսրայելին»:

Ավելի վաղ մի շարք հեղինակավոր լրատվամիջոցներ այդ մասին գրել էին որպես «կատարված բան»: Իսկ ռազմական փորձագետներն ասում էին, որ դա «հնարավորություն կտա, որ իսրայելական ռազմական ինքնաթիռները խուսափեն օդում լիցքավորվելուց, որի դեպքում դրանք իրանական ՀՕՊ-ի ուժերի համար կդառնային չափազանց խոցելի»:

Այս կապակցությամբ CNN-ին տված հարցազրույցում ԱՄՆ Սենատի հեսախուզության հանձնաժողովի ղեկավար Դայան Ֆայնշտեյնը ասել է, որ հանձնաժողովում իր 11-ամյա աշխատանքի ընթացքում Սպիտակ տնից «այդքան արտահոսք չի եղել, որքան ներկայումս»: Սենատորն, ընդսմին, խստորեն զգուշացրել է, որ «չնայած Օբամայի վիրավորվածությանը եւ Սպիտակ տան մեղադրանքներին, նրանք չեն խուսափի հեսաֆնությունից»: Պետք է հասկանալ, որ Ֆայնշտեյնն ակնարկել է տեղեկատվական արտահոսքի համար անմիջապես վարչակազմի պատասխանատվությունը:

Վստահաբար կարելի է եզրակացնել, որ Բավրում պետքարտուղար Քլինթոնի եւ Իլհամ Ալիեւի բանակցություններում «տեղեկատվական արտահոսքը» քննարկվել է ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ: Այսինքն, Իլհամ Ալիեւը թերեւս փորձել է պետքարտուղարին «կշտամբել» այն բանի համար, որ ամերիկյան մամուլը գաղտնազերծել է Իսրայել-Ադրբեջան պայմանավորվածությունները: Այս հանգամանքը, հավանաբար, պատճառ է դարձել, որ ադրբեջանական կողմը «ապահովության լրացուցիչ երաշխիքներ» պահանջի Միացյալ Նահանգներից այն դեպքում, երբ «կմիանա հակաիրանական կոալիցիային»:

Շատ ուշագրավ է, որ պաշտոնական Բաքուն մի շարք ձեւաչափերով, այդ թվում՝ Իլհամ Ալիեւի մակարդակով, «հավաստիացրել է, որ ադրբեջանական տարածքը չի տրամադրվի հակաիրանական գործողությունների»: Բայց սա խնդրի մի կողմն է՝ թե այսուհետեւ, երբ Վաշինգտոնում հեսաֆնություն սկսելու մասին լուրը արդեն միջազգային հանրության սեփականությունն է դարձել, Ադրբեջանն ինչպե՞ս է պատասխանելու իրանական կողմի դժգոհությանը:

Առավել ուշադրության կարոտ է այն, թե ինչո՞ւ ամերիկյան մամուլը հրապարակայնացնում է Իսրայել-Ադրբեջան գործարքի տեղեկատվական արտահոսքի հարցն առհասարակ: Կարծես թե ոչինչ չպետք է խանգարեր, որ սենատոր Ֆայնշտեյնը պաշտոնական տեսք չտար այդ նուրբ խնդրին: Բայց «գնացքն արդեն մեկնել է»: Ըստ երեւույթին՝ Սպիտակ տան իմացությամբ:

Այդ դեպքում խոսքը կարող է վերաբերել երկու հեռանկարի: Առաջին, ԱՄՆ-ը կարող է հեսամուս լինել եւ պարզել, որ արտահոսք թույլ է տվել ոչ թե Սպիտակ տունը, այլ՝ Ադրբեջանը: Իսկ դա հավանական է, եթե նկատի ունենանք, որ այդ ձեւով Իլհամ Ալիեւը կարող էր փորձել իրեն «ավելի քանկ վաճառել»: Երկրորդ, եթե արտահոսք եղել է Սպիտակ տնից, ապա չպետք է բացառել, որ դա էլ մտածված է արվել, որպեսզի Ադրբեջանը որեւէ պահի չփորձի գնալ Իրանի հետ հարաբերությունների «սեղարաս կարգավորման»: Երբ ամեն ինչ ակնհայտ է, ապա ի՞նչ է մնում Իլհամ Ալիեւին, եթե ոչ մինչեւ վերջ կապվել հակաիրանական «կոալիցիայի կառքին»: Նույնիսկ եթե դա «մատաղացու անասունի կարգավիճակով» է արվում:

Երկու դեպքում էլ ակնհայտ է դառնում, որ ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունները բոլորովին էլ գործընկերային չեն: Հակառակ դեպքում խնդրո առարկա տեղեկատվական արտահոսքը կկրեր այլ բնույթ, կարվեր այլ ձեւակերպումներով: Թեկուզ եւ՝ որ «Իսրայելը քննարկում է ադրբեջանական ռազմական օդանավակայանները վարձակալելու հնարավորությունը»: Այդ դեպքում Բաքուն «դեմք փրկելու» հնարավորություն կտանար: Ամերիկացիները, ինչպես միշտ, շատ դաժան են վերաբերվել «կրտսեր դաշնակցին»՝ տալով եւս մի լուրջ հարված. տեղեկատվական երկրորդ արտահոսքը կազմակերպվել է պետքարտուղարի Հարավային Կովկաս այցից անմիջապես հետո: Իսկ դա նշանակում է, որ Ադրբեջանին վերապահված է ոչ թե «գործընկերոջ», այլ սադրիչի դերակատարություն՝ դրանից բխող հետեւանքներով հանդերձ:

«Նախաձեռնողական եւ արդյունավետ արտաքին քաղաքականություն վարելու» համար կարելի է Իլհամ Ալիեւին ստանց շնորհավորել: Արեւմուտքի, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների միջոցով Լեռնային Ղարաբաղի խնդիրը «բացառապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում լուծելու» մասին առաստելը, որ ջանադրաբար շրջանառության մեջ էր դրել Ադրբեջանի «քաղաքագիտական» եւ «վերլուծաբանական» հանրությունը, օձառի պողպակի պես պայցեցրեց The Washington Times-ը: Անշուշտ՝ ոչ առանց ԱՄՆ պետքարտուղարության մասնակցության:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հայկական նոր եկեղեցու հիմնարկեք Յակուտիայում

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի մամլո դիվանից տեղեկացնում են, որ Յակուտիայում թեմական առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ձեռամբ կատարվել է եկեղեցու հիմնարկեքի արարողություն:

Հիմնարկեքի ընթացքում թեմական առաջնորդը Տ. Հակոբ քահանա Սարոյանի հետ սրբալույս մյուռոնով օծել է տասնվեց խաչանիշ քարերը, որոնք եկեղեցու տասնվեց կնքահայրերը զետեղել էին աղոթատան հիմքերում: Հայկական ավանդական ճարտարապետական ոճով նախագծված եկեղեցին կառուցվելու է համայնքի հավատավոր հայորդիների բարերարությամբ:

Մեծաթիվ համայնքի հոգեւոր պահանջները բավարարելու համար դեռեւս 2001 թվականին Հայաստանից բերվել եւ ռուսական եկեղեցու բակում տեղադրվել էր մի խաչքար: Սակայն աղոթքի կանգնելու, եկեղեցու սրբազան արարողություններն ու խորհուրդները իրականացնելու համար անհրաժեշտ էր կառուցել աղոթատուն:

Հայաստանից բերված տուֆ քարով կառուցվող եկեղեցու շինարարական աշխատանքները կավարտվեն երկու տարվա ընթացքում: Նախատեսվում է եկեղեցուն կից կառուցել նաեւ մշակութային կենտրոն: Արդեն մի քանի տարի է բարեհաջող լույս է տեսնում քաղաքի շուրջ 5000-անոց հայ համայնքի միակ հայկական պարբերականը՝ «Արմյանսկի վեստնիկ» թերթը:

Լիդիցեի ողբերգության 70-ամյա տարելիցը

1-ին էջից

Պատերազմի վետերանների միության նախագահն էլ իր ելույթում առաջարկեց քննարկել ներում սացած, բայց իր համագյուղացիների հետ մինչեւ վերջ մնացած եւ զոհված հոգեւորականին սրբերի կարգը դասելու հարցը:

Հիշեցնենք, որ Լիդիցե, հետագայում նաեւ Լեժակի եւ Էվիչկո գյուղերի ոչնչացումը նացիստների պատասխանն էր գերմանական ռայխի ներկայացուցիչ (պրոտեկտոր) Ռեյնհարդ Հեյդրիխի մահափորձին: Միայն այդ օրը Լիդիցեում զոհվեցին 173 տղամարդիկ, իսկ զոհերի ընդհանուր քանակը հասավ 340-ի, որոնցից 88-ը երեխաներ էին: Համակենտրոնացման ճամբարներ ուղարկված կանանցից ու երեխաներից հետագայում ողջ մնացին 14 կին ու 17 երեխա: Իսկ գյուղն ամբողջությամբ ավերվեց ու հրի մատնվեց:

Երկրորդ համաշխարհային պատերազմը Չեխիայում խորհրդանշող Լիդիցեի ողբերգությունից զոհված երեխաների հիշատակին արդեն 40-րդ անգամ անցկացվող միջազգային մանկական ցուցահանդեսում այս տարի նույնպես մասնակցել էին հայաստանցի երեխաները, որոնք արժանացել էին տարբեր մրցանակների: Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանը այցելեց նաեւ հուշահամալիրում գտնվող պատկերասրահը եւ ծանոթացավ շնորհալի դպրոցականների աշխատանքներին: Մասնավորապես Դիլիջան եւ Երեւան քաղաքների հինգ դպրոցականներ արժանացել էին պատվոգրերի, իսկ Դիլիջանի գեղարվեստի դպրոցի սան, յոթնամյա Աննա Գեւորգյանը՝ ցուցահանդեսի մեդալին: Տեղին է նշել, որ այս միջազգային ցուցահանդեսի հիմնադիրներից է հայ ժողովրդի մեծ բարեկամ, ակադեմիական նկարիչ Յիրժի Նոսեկը, ում՝ Հայաստանին նվիրված անհատական ցուցահանդեսը մեկ ամիս շարունակ գործեց Պրահայի GH ցուցասրահում:

ԵՐԵՎԱՆ

«Մայրաքաղաքի բոլոր բակերը պետք է լինեն բարեկարգ»

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, քաղաքապետարանում երեկ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ քաղաքապետ Տարոն Մարգարյանը կարեւորել է բակերի բարեկարգման աշխատանքների հնարավորինս արագ ավարտելը. «Մենք հայտարարել ենք, որ առաջիկա տարիների ընթացքում պետք է հասնենք նրան, որ մայրաքաղաքի բոլոր բակերը լինեն բարեկարգ եւ ծառայեն փոքրերին որպես խաղահրապարակ, իսկ մեծերի համար էլ լինեն հաճելի հանգստի գոտի: Բակային տարածքների բարեկարգումը պետք է լինի վարչական շրջանների ղեկավարների ամենօրյա ուշադրության կենտրոնում»: Նույնը նա նշել է նաեւ մայրաքաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների վերաբերյալ: «Զստացվի այնպես, որ մի փոքրիկ անկյուն ներկելով համարեն, թե շքամուտք են վերանորոգել: Այս հարցում համագործակցք նաեւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության հետ, որպեսզի նրանք էլ իրենց հերթին շքամուտքերում իրականացնեն մալուխային տնտեսության կարգավորման աշխատանքները», նշել է Տարոն Մարգարյանը:

Հյուսիսային պողոտան կկանաչապատվի

Առաջիկայում կմեկնարկեն Հյուսիսային պողոտայի բարեկարգման, կանաչապատման եւ արտաքին լուսավորության ցանցի նորացման աշխատանքները, պողոտայում մոտ երեք անգամ կավելանան կանաչ տարածքները, կփոխարինվեն սալիկներն ու նոր լուծումներ կտրվի արտաքին լուսավորությանը: Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանձնարարել է ծրագրին մասնակից դարձնել նաեւ պողոտայի տարածքում գտնվող օբյեկտների սեփականատերերին:

Ի՞նչն է վերահսկել տրանսպորտի վարչության պետը

Տրանսպորտի վարչության պետը զեկուցել է, որ շարունակվում է հասարակական տրանսպորտի սպասարկման որակի ամենօրյա վերահսկողությունը: Արձանագրված խախտումների մասով կազմվել են վարչական արձանագրություններ: Թե ի՞նչ խախտումների վերաբերյալ, ի՞նչն է վերահսկել տրանսպորտի վարչության պետը, դժվար է ասել, բայց որ դա որեւէ կերպ չի ազդել Երեւանի տրանսպորտի խայտառակ վիճակի վրա, ակնհայտ է ամեն քայլափոխի:

Զեկուցվել է, որ մայրաքաղաքի երթուղիներում գործող ավտոբուսներում քաղաքապետի հանձնարարությամբ շարունակվում են WiFi կապով ապահովելու ուղղությամբ աշխատանքները: Տարոն Մարգարյանը հանձնարարել է WiFi կապով ապահովել նաեւ մայրաքաղաքի մարդաշատ վայրերը, այգիներն ու պուրակները:

Քարեկարգմանը մասնակից դարձնել մասնավորին

Այգիներում եւ պուրակներում գիշերային լուսավորություն ապահովելու նպատակով հանձնարարվել է աշխատանքներին մասնակից դարձնել նաեւ տարածքները վարձակալած տնտեսվարողներին: Զեկուցվել է, որ համապատասխան իրավական քայլեր են ձեռնարկվել պարտադիր բարեկարգման նորմերը չպահպանող մի շարք տնտեսվարող սուբյեկտների հետ վարձակալական պայմանագրերը դադարեցնելու ուղղությամբ:

Քաղաքապետը հանձնարարել է շարունակել հետեւողական աշխատանքը մասնավոր այն ընկերությունների հետ, որոնք պատրաստակամություն են հայտնել ներդրումային ծրագրերի շրջանակում աջակցել մայրաքաղաքում գույքագրված եւ վերագործարկման ենթակա շատրվանների վերանորոգման հարցում:

Վարչական շրջանների տարածքներում իրականացվող ոռոգման համակարգի գույքագրման արդյունքում վարչական շրջաններից առաջարկություններ են ներկայացվել ինչպես կապիտալ, այնպես էլ ընթացիկ վերականգնման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ: Զեկուցվել է, որ նոր պոմպակայանի տեղադրման եւ մետրոպոլիտենի կայարաններում կուտակվող ջրային պաշարների օգտագործման միջոցով լուծվել է Տիգրան Մեծի պողոտայի կանաչ գոտիների ոռոգման հարցը:

Կարա-Բալան՝ նորից Աբովյան փողոցում

Քաղաքապետության խորհրդակցության ժամանակ զեկուցվել է, որ գեղարվեստական խորհուրդը հավանություն է տվել Կարա-Բալայի արձանը Աբովյան փողոցում վերատեղադրելու հարցին:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Ամփոփում

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը երեկ ամփոփեց դեղերի գծով պետական գնումների ոլորտում իրականացված վարչական վարույթի արդյունքները: Նիստում որոշվեց դեղերի ներկրմամբ եւ իրացմամբ զբաղվող խոշորագույն ընկերությանը՝«Նատալի ֆարմ»-ին տուգանել 50 միլիոն դրամի չափով:

Նիստում տեղեկացվեց, որ հանձնաժողովը դիմում բողոք էր ստացել ԱԺ «Ժառանգություն» խմբակցության նախկին պատգամավորներ Անահիտ Բախշյանից եւ Ստեփան Սաֆարյանից, որ դեղերի գծով պետական գնումներ է: Մի շարք դեպքերում էլ կազմակերպված մրցույթները կրել են ձեւական բնույթ: Հայտնաբերվել են նաեւ դեպքեր, երբ դեղերի առուվաճառքով զբաղվող ընկերությունը մրցույթից հետո բուժհաստատություններին կատարել է նվիրատվություն, խաթարվել է մրցութային գործընթացը, եւ մրցույթը հայտարարող բուժհաստատությունը, գնման պահանջի վերացման պատճառաբանությամբ, պայմանագիր չի կնքել մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության հետ:

Ամփոփելով վարչական վարույթի արդյունքները՝ հանձնաժողովը դեղորայքի ներկրմամբ եւ իրացմամբ զբաղվող 7 տնտեսվարողների (Նատալի ֆարմ ՍՊԸ, Եվրոֆարմ ՍՊԸ, Ռուսֆարմ ՍՊԸ, Ամիկուս ՍՊԸ, Էգդանի ՍՊԸ, Մեգի էլ ՍՊԸ , Կամելիա ՍՊԸ, Անիկոֆարմ ՍՊԸ, Ա/Ձ Հրանտ Գեւորգյան) եւ շուրջ երեք տասնյակ բուժհաստատությունների (Երեւանի թիվ 20 պոլիկլինիկա, Երեւանի թիվ 19 պոլիկլինիկա, Սեւանի հիվանդանոց, Տաշիրի բժշկական կենտրոն, Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա, Գուգարքի կենտրոնական պոլիկլինիկա, Սպիտակի բժշկական կենտրոն, Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա, Ստեփանավանի բժշկական կենտրոն, Երեւանի թիվ 22 պոլիկլինիկա, Չարենցավանի բժշկական կենտրոն, Վեդու ծննդատուն, Հրազդանի բժշկական կենտրոն, Երեւանի թիվ 4 պոլիկլինիկա, Վեդու բժշկական կենտրոն, Աբովյանի ծննդատուն, Դիլիջանի բժշկական կենտրոն, Իջեւանի առողջության կենտրոն, Մեծամորի բժշկական կենտրոն, Վաղարշապատի հիվանդանոց, Երեւանի թիվ 5 պոլիկլինիկա, Նոյեմբերյանի հիվանդանոց, Մարտունու ծննդատուն, Աբովյանի բժշկական կենտրոն, Արարատի հիվանդանոց, Մարտունու բժշկական կենտրոն, Քաջարանի բժշկական կենտրոն, Արմավիրի բժշկական կենտրոն) գործողությունները ճանաչեց որպես հակամրցակցային:

Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բացի «Նատալի ֆարմից», մնացած բոլոր ընկերությունները ունեն անհամեմատ փոքր ծավալներ, եւ շատերը իբր տեղեկացված չեն ոլորտի օրենսդրական պահանջներին, հանձնաժողովը որոշեց խիստ նախազգուշացում հայտարարել վերջիններիս նկատմամբ, պարտադրելով նրանց այսուհետեւ ձեռնպահ մնալ նման վարքագծի դրսեւորումից, կատարել օրենքի պահանջը՝ դեղորայքի եւ բուժական պարագաներ ձեռք բերել բացառապես մրցույթով:

Իսկ «Նատալի ֆարմը» տուգանվեց դեղերի ներկրման եւ իրացման ոլորտում իր զբաղեցրած գերիշխող դիրքի չարաշահման համար եւ նախազգուշացվեց հետագայում նման վարքագիծը բացառելու մասին:

Նիստի վերջում հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանը** շնորհակալություն հայտնեց «Սզնի» ընկերությանը եւ կոչ արեց բոլոր տնտեսվարողներին՝ հետեւել նրա օրինակին եւ մրցակցային խնդիրների առնչվելիս տեղեկացնել հանձնաժողովին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց նաեւ, որ պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրություններն այսմանով չեն սահմանափակվում, առաջիկայում կլինեն նոր բացահայտումներ:

Գերիշխող դիրքի շարաշահման համար օրենքով նախատեսվում է 5 մլն դրամից մինչեւ 200 մլն դրամ տուգանք: Այսինքն, 50 մլն դրամ տուգանքը տնտեսվարողի համար ինքնին փոքր գումար չէ, բայց եթե հաշվի առնենք, որ «Նատալի ֆարմը» պատկանում է հայտնի օլիգարխ Սամվել Ալեխանյանին, ապա դա նրա համար բոլորովին էլ մեծ գումար չէ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սամվել Ալեխանյանի «Նատալի ֆարմը» տուգանվեց 50 միլիոն դրամով

Դեղորայքի ոլորտում գերիշխող դիրքի չարաշահման համար

«Մոլորակ Հայաստան» գիրքն ու գերմանացի լրագրողի ուխտագնացությունը Լեռնային Ղարաբաղ

«Մոլորակ Հայաստան» իր գիրքն ու ընդհանրապես Հայաստան այցելության տպավորությունները «Nordwestradio»-ին տված հարցազրույցում ներկայացրել է գերմանացի լրագրող **Յոխեն Մանգելսենը**՝ երեք շաբաթյա ճամփորդությունը էլի վերապրելու ցանկություն արտահայտելով:

«Նախկին այցելությունների ընթացքում ես մեկ անգամ եղա Լեռնային Ղարաբաղում գտնվող Դադիվանքում, որից հետո որոշեցի կրկին գալ այստեղ, բայց որպես ուխտագնաց: Եվ այսպիսով, էջմիածնից՝ Հայ առաքելական եկեղեցական կենտրոնից՝ հայկական Վատիկանից ես ճանապարհ ընկա դեպի լեռների մեջ գտնվող գողտրիկ այդ եկեղեցին», պատմել է գերմանացի լրագրողը՝ սեփական ուխտագնացությունը ներկայացնելով որպես «ինքնաբացահայտում, ինքնորոշում»:

Դադիվանքի ուխտագնացությունը Մանգելսենը ներկայացնում է որպես խիստ անձնական մի ճամփորդություն, փնտրտուք: «Այո, դա փնտրտուք է, բայց ամեն մարդ ինքն է որոշում, թե ինչ է ուզում: Միայն ճանապարհին հասկացա, որ ես ձիշտ ուղղության վրա եմ: Սա այն է, ինչ ես ուզում եմ», վկայում է Մանգելսենը, որ նաեւ «Մոլորակ Հայաստան» գրքի հեղինակն է: Իսկ Հայաստանը մոլորակ է ներկայացրել պարզ մի պատճառաբանությամբ. ճամփորդության առաջին օրերին բջջային հեռախոսը կորցրած լրագրողը հայտնվել է մի օտար երկրում՝ առանց լեզվի իմացության, այսինքն՝ «մի ուրիշ մոլորակի վրա»:

Գերմանացի լրագրողի առավել խոր հիմնավորումը հետաքրքրական է այն իմաստով, որ «Հայաստան» անվանմամբ ներկայացնում է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հայկական սփյուռքը, աշխարհի մոտ 10 մլն հայերին, Պատմական Հայաստանը, որտեղ, գերմանացու խոսքերով, հայերն ապրում էին մինչեւ 1915-ը:

Յոխեն Մանգելսենի խոսքերով՝ «Այս ամենը միավորվում են Հայաստան անվան տակ, դա այնքան բարդ ու մեծ գաղափար է, որ, կարծում եմ, «մոլորակը» ամենահարմար բնորոշումն է», ասվածին ավելացնելով՝ Հոլոքոսքն ընդունվում ու դատապարտվում է, բայց դրանից ավելի վաղ տեղի է ունեցել «եւս մեկ կոտորած՝ հայերի Մեծ եղեռնը (Գենոցիդ), որը գերմանացիներս ոչ միայն չենք խանգարել, այլ նաեւ, այսպես ասած, ողջունել ենք»:

Գերմանացի լրագրողի բնորոշումները, ինչպես ինքն է խոստովանում, ինքնաբերաբար են սացվում. հրաշքների երկիր, ուր այցելողները կախարդվում են, երկիր՝ հնագույն մշակույթի, առասպելների, իրադարձությունների: «Սա կախարդիչ մի երկիր է, որտեղ գտնվում է կախարդական լեռ Արարատը, որը հայերի կարոտի լեռն է. Հայաստանի սահմանից դուրս է՝ Թուրքիայի տարածքում... Հայկական եկեղեցիները կրթական կենտրոններ են եղել: Շատերը նրանցից ավերվել են, մնացածը՝ բավականին լավ պահպանվել կամ վերանորոգվել: Հայ առաքելական եկեղեցին ամենապահպանողական եկեղեցիներից մեկն է, բայց մարդիկ շատ բացսիրտ եւ բարեհամբույր են»:

«Ես նրանց կասեմ՝ պարզապես գնալ եւ տեսնել այդ հրաշքների երկիրը», զբոսաշրջիկներին խորհուրդ է տալիս գերմանացի լրագրողը:

Ա. Հ.

Մոսկվայում հակահայ կրքեր կեղծ հայի պատճառով

Լրագրական աշխատանքի բերումով Մոսկվայում հաճախ եմ հանդիպել «հայրենակիցների», որոնց ազգային ծագման միակ նշույլը եղել է նրանց ազգանունը: Ուրիշ ոչինչ: Էությամբ եղել են ռուս, երբեմն էլ՝ հրեա: Արդարացել են՝ դե, ազգանունը ժառանգել են պապից, հորից, իսկ իրենք խառն արյուն ունեն, մեծացել են բուն ռուսասանյան միջավայրում եւ այլն:

Եթե այդ մարդիկ իրենց անհատականությամբ ու կեցվածքով նորմալ անձնավորություններ են, ապա ծագումը հիշեցնող ազգանունը նրանց թերահայությանը չի խանգարում: Բայց բավական է մի սխալ, եւ այդ ուծացված անձը, իրենից էլ անկախ, ընդունակ է խայտառակելու ազգին, որի հետ նա, ինչպես ասացինք, ըստ էության ոչ մի առնչություն արդեն չունի:

«Ազգափիլիսոփայական» այս խոհերն առաջ եկան հայտնի ռադիոհաղորդավար, ավտոփորձագետ Սերգեյ Ասլանյանի մի հարցազրույցից հետո: Ես ծանոթ չեմ այդ մարդու հետ, սակայն չեմ էլ նկատել, որ նա որեւէ ձեւով կապված լինի տեղի հայության, համայնքի հետ: Արտաքինով էլ նման չէ հայի (երեւի «հիբրիդ» է): Ահա եւ «յան»-ով վերջացող ազգանունով այս մարդը, հանդես գալով «Մայակ» ռադիոկայանով եւ խոսելով նոր ավտոմեքենաներ ընտրելու միանգամայն «աշխարհիկ» թեմայով, որտեղից որտեղ (թե ինչ է փչում խելքին, հայտնի չէ) ծավալվում է... Մուհամեդ մարգարեյի կենսագրության շուրջը: Ինքնին հասկանալի է, որ իսլամի հիմնադրի ժամանակներում ավտոտեխնիկա գոյություն չի ունեցել, եւ անիմաստ է շաղկապել ոչ մի առնչություն չունեցող այդ երկու թեմաները: Բայց Ասլանյանը ինքնակամորեն, կասեինք՝ առանց ուղեղին զոռ տալու, «ավտոշոուում» սկսում է վերարտադրել մարգարեի ապրած կյանքի իր «պատկերացումները»: Պարզվում է, որ Մուհամեդը եղել է ոչ թե կրոնական հիմնադիր առաջնորդ, այլ... բիզնեսմեն, որը պարզապես որոշել է «վեր» բարձրանալ: Որ նա ընդամենը «արտագրել» է Աստվածաշունչը: Որ ունեցել է սեռական լուրջ խանգարումներ, այդ պատճառով էլ իր համակիրներին գայթակղել է բազմակնությամբ՝ չորս էգով: Եվ այլն ու այս ոճով: Հազիվ թե լուսավորյալ Ասլանյանին հայտնի չէին դանիացի ծաղրանկարչի, հնդկական ծագումով բրիտանացի գրողի հակահիսլամական հղանքների առաջացրած մահաշունչ արձագանքները:

Իսկ հիմա պատկերացրեք ռուսասանցի մուսուլմանների բողոքի ու ցասման ելույթների մակարդակը: Ամենաառաջինը՝ ոմն մուսուլման (մեծ հավանականությամբ՝ թաթար), հեռախոսազանգով տնից հանելով Ասլանյանին՝ դանակի խան հարված է հասցնում նրան (բարեբախտաբար՝ ոչ մահացու): Եվ սա սոսկ սկիզբն էր: Երկրի համայն մուսուլմանական հասարակության ներկայացուցիչները՝ բարձրագույնից մինչեւ շարքայինը, նզովեցին հրեավոր իսլամատյացին, խստմնելի սադրիչին, նողկալի քարոզչին, պահանջեցին քրեական եւ զանազան այլ պատիժների ենթարկել նրան (ընդհուպ՝ քարկոծել):

Քավ լիցի, եթե դրանով ամեն ինչ ավարտվեր: Ինտերնետը անմիջապես աղոտվեց հակահայկական հայհոյանքներով, որոնց ընդհանուր միտքը հետեւյալն էր՝ ո՞վ ես դու, ողորմելի հայ գյավուր, որ համարձակվում ես պղծել մեր ամենաբարձրյալին: Իսկական վայնասուն:

Ռուսասանը Եվրոպա չէ, որտեղ մուսուլմանները եկվոր են: Ռուսասանցի մուսուլմանները դարերով ապրում են իրենց պատմական հողում: Ոչ մի քիչ թե շատ բանական մոսկվացի հայ իրեն թույլ չէր տա նման անպատասխանատու շաղակրատանքներ՝ հստակ պատկերացնելով անփառունակ հետեւանքները: Ո՞ւմ կապացուցես, որ այդ մարդու ազգանունն է միայն հայկական, այն էլ արմատով՝ մուսուլմանական: Եվ ո՞նց մոսկվայաբնակ ադրբեջանցին կփախցնի իր շանսը նորից փնտվելու «ռասիստ» հայերին, վերհիշելու նրանց «օկուպանտ» էությունը: Թաթարից, չեչենից, ինգուշից բարձր կգոռա:

Իրեն եւ ընտանիքի անդամներին վտանգի ենթարկած Ասլանյանը նոր է զգում իր արածի կատարյալ տխմարությունը: Իսկ սպառնալիքները «պիղծ հայի» նկատմամբ իրական են: Բայց սա հարցի սոսկ մի՝ մասնավոր կողմն է: Անհամեմատ ավելի տհաճ է անհարկի ու անիմաստ հակահայկական կրքերի բորբոքումը Ռուսասանում: Այն էլ՝ կեղծ հայի պատճառով:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

ԽՈՐՀՈՒՐԴ ՕՏԱՐ ՁԵՌՍԱՇԲՅԻԿՆԵՐԻՆ

Բնօրրան

Մալաթիայի 60 հայերն ու կիսավեր եկեղեցին

Ստամբուլից ինքնաթիռով ավելի քան մեկ ժամ ճանապարհ՝ եւ հայտնվում ես Արեւմտյան Հայաստանի Մալաթիա քաղաքում: Մալաթիան մեծ ու գեղեցիկ քաղաք է՝ նորակառույց շենքերով, այգիներով ու խանութներով: Քաղաքի նոր կյանքի պատմությունը սկսվեց 1983-ից, երբ Թուրքիայի վարչապետ դարձավ մալաթիացի Թուրգուտ Օզալը: Մալաթիան զարգացնելու նպատակով նորանշանակ վարչապետը մի քանի գործարան բացեց, շենքեր կառուցեց, ճանապարհները նորոգեց, այսօր Մալաթիան բավական զարգացած եւ հարուստ քաղաք է:

Մալաթիա

Արեւմտյան Հայաստանի այլ քաղաքների նման էլ այստեղ կարելի է գտնել հայկական հետք՝ ավերված եկեղեցիներ, գերեզմանատներ ու կառույցներ:

Արդեն երկու տարի Մալաթիայում հիմնադրվել է «Հայդեր» կազմակերպությունը, որի գլխավոր գրասենյակը Ստամբուլում է: Կազմակերպության նպատակն է իր շուրջ հավաքել Թուրքիայում եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող մալաթիացիներին, ովքեր Հայոց ցեղասպանությունից հետո լքել են հայրենի Մալաթիան ու գաղթել տարբեր երկրներ: Այժմ կազմակերպությունն իր շուրջն է հավաքել 200 մալաթիացու: Նրանցից 60-ն ապրում են Մալաթիա քաղաքում: «Հայդեր» կազմակերպության Մալաթիայի գրասենյակի ղեկավար Սերդեր Բոյաջի պապը հայ էր, ծնողները՝ իսլամացած հայեր, թուրքական ազգանուններով: Ինքն ու իր զավակները ընդունել են քրիստոնեություն: Հայերեն խոսել չեն կարողանում, սակայն ներկայանում են որպես փոքրաթիվ հայկական համայնքի անդամներ:

Բոյաջի ներկայացմամբ՝ ծպտյալ հայերի թիվը Մալաթիայում գերազանցում է 150-ը: Նախնիների եւ ազգային պատկանելության մերժման պատճառը ձեւավորված վախի մթնոլորտն է: Այս հարցում լուրջ դերակատարություն ունեն ոչ միայն անցյալի հիշողություններն ու նախնիների պատմությունները, այլեւ նոր վտանգները: Երկու տարի առաջ Մալաթիայում ընդհատակյա ազգայնական խմբերը հարձակումներ էին գործում քրիստոնյաների վրա, ծեծում, երբեմն սպանում: Այսօր նման երեւույթներ չկան, սակայն հայերի մեջ վախը դեռ արմատախիլ չի եղել:

«Հայդեր» կազմակերպության գլխավոր նպատակը Մալաթիայում հայկական գերեզմանոցի պահպանումն ու հսկումն է: Նրանք որոշել են գերեզմանոցի շրջակայքում չգործող աղոթատեղին կառուցել եւ դարձնել փոքրիկ ակումբ տեղացի հայերի համար: Փոքրիկ մատուռը վերակառուցելու նպատակով Մալաթիայի հայերը նախ դիմել են քաղաքապետարանին՝ բայց սացել են մերժում: Քաղաքապետարանը դեմ չի եղել, երբ հայերն առաջարկել են սեփական գումարով եւ ուժերով վերակառուցել: Շինարարական աշխատանքները սկսվել են նախորդ տարվա աշնանը եւ ավարտվել այս տարվա փետրվարին: Փետրվարի 2-ին տեղի է ունեցել կենտրոնի բացումը, իսկ հաջորդ օրը տեղահայերը նորակառույց շինությունն ավերված են տեսել: Քաղաքապետարանի բացատրությունն էլ հետեւյալն է. «Կառույցը հիմնահատակ ավերել ենք, քանի որ եկեղեցու տեսք ուներ»:

Մալաթիահայերը մեծ աղմուկ են բարձրացրել, կատարածին անդրադարձել են նաեւ թուրքական լրատվամիջոցները, լուրը հասել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Ըստ Բոյաջի, Էրդողանը զանգել է քաղաքապետարան եւ բացատրություն պահանջել: Մեկ ամիս առաջ Մալաթիայի քաղաքապետը զանգել է Բոյաջին եւ տեղեկացրել, որ ակումբը կվերակառուցվի աշնանը, սակայն ճարտարապետական այնպիսի նախագծով, որ եկեղեցի չհիշեցնի:

Բոյաջիի ներկայացմամբ՝ մինչեւ Հայոց ցեղասպանությունը Մալաթիան չորս հայկական եկեղեցի ուներ: Նրանցից երկուսը՝ Սուրբ Երրորդությունն ու Գրիգոր Լուսավորիչը, ավերված են, երրորդը վերածվել է մզկիթի եւ գտնվում է Մալաթիայի շուկայի կենտրոնում: Չորրորդի վերաբերյալ տեղեկություններ չկան:

250-ամյա հայկական Սուրբ Երրորդություն (Թոշհորոն) եկեղեցին գտնվում է Չահուշօղլու թաղամասում: Եկեղեցու բանալին Արման եւ Մուրադ հայ եղբայրների մոտ է: Մինչ եկեղեցու դռները բացելը Մուրադը զգուշացնում է. «Մտեք անաղմուկ եւ կարճ ժամանակով: Ոստիկանությունն արգելում է զբոսաշրջիկին հայկական եկեղեցի մուտք գործելը, իսկ թույլտվություն ստանալու համար 4-5 ժամ է պահանջվում»: Մուրադն ու Արմանն էլ հայերեն խոսել չգիտեն: Ամուսնացած են, երեխաներին հայկական անուններ են տվել: Զբաղվում են կահույքագործությամբ: Հայաստանում չեն եղել, սակայն հույս ունեն, որ սահմանի բացումից հետո հայրենիքի հետ կապն ավելի կսերտանա:

Մուրադ եւ Արման եղբայրները

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, պատերին՝ թուրքական գրություններ:

Շուրջ մեկ դար պատարագ ու աղոթք չլսած, խնկի բույր չզգացած Սուրբ Երրորդությունն այսօր կիսաքանդ շինություն է եւ ոչնչով չի տարբերվում Արեւմտյան Հայաստանի այլ եկեղեցիներից: Եկեղեցու հենց կողքին բետոնե փոքրիկ անշուք շինություն կա՝ մզկիթ է: Կառուցված է հատուկ՝ կարծես առավել նսեմացնելու հազարամյա պատմություն ունեցող եկեղեցուն, կարծես նամազ կանչող մոլլայի ձայնով առավել խեղդելու արդեն կիսամեռ, ակեղեցու գմբեթն ու խորանը չկան, ներսն ավերված է, իսկ պատերին կարելի է կարդալ թուրքերենով սիրո խոստովանություններ: Թուրքական կառավարությունը որոշում է կայացրել եկեղեցին վերանորոգել: Աշխատանքները կսկսվեն մի քանի ամսից, սակայն վերանորոգումից հետո հայկական եկեղեցին կծառայի կամ որպես գրադարան, կամ՝ մշակութային կենտրոն:

Սերդեր Բոյաջ

Գերեզմանատան հարեւանությամբ ավերված նորակառույց ակումբը

Մալաթիայից մի քանի կմ հեռու՝ Վենք քրդական գյուղում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Եկեղեցու անմխիթար ու կիսականգուն վիճակն անգամ չի խամրեցնում կառույցի երբեմնի գեղեցկությունը: Եկեղեցու ներսն ավերակ է: Երբեմնի գեղեցկուհին այսօր կույլ է եկել, սպասվող արհավիրքներին դիմակայում է առանց խորանի ու գմբեթի: Այստեղ արդեն հարյուր տարի մոմ չի վառվել, աղոթք չի հնչել: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին անձրեւի ժամանակ որպես ախոռ է ծառայեցվում տեղացի քրդերի անասունների համար, իսկ ամռան ամիսներին եկեղեցին վերածվում է խաղահրապարակի քուրդ ու թուրք երեխաների համար: Մեր այցելության ժամանակ էլ եկեղեցու տարածքում կային բազմաթիվ երեխաներ: Եկեղեցու մի հատվածում մաթեմատիկայի պատռված դասագրքի կտորներ էին, տիկնիկ ու գնդակ:

Եկեղեցու հենց կողքին բետոնե փոքրիկ անշուք շինություն կա՝ մզկիթ է: Կառուցված է հատուկ՝ կարծես առավել նսեմացնելու հազարամյա պատմություն ունեցող եկեղեցուն, կարծես նամազ կանչող մոլլայի ձայնով առավել խեղդելու արդեն կիսամեռ, առանց զանգի ու խաչի եկեղեցուն:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգումն էլ թուրքական իշխանությունների օրակարգում է: Նախատեսվում է վերանորոգել եւ դարձնել մշակութային կենտրոն: Վերանորոգումից հետո բազմաթիվ հայկական հուշարձանների, բերդերի ու եկեղեցիների օրինակով այս եկեղեցին էլ կընդգրկվի Թուրքիայի պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում եւ կհամարվի «թուրքական փայլուն ճարտարապետության գլուխգործոց»:

Համաձայն պատմական աղբյուրների եւ վկայագրերի՝ հայերի զանգվածային կոտորածները Մալաթիայում սկսել են 1895-ից: Դրանք պարբերաբար շարունակվել են մինչեւ 1915 թ: Կոտորածներն ու բնիկների տեղահանման հետեւանքով 20.000 հայ բնակչություն ունեցող Մալաթիան վերածվեց քրդա-թուրքական քաղաքի՝ ժամանակի ընթացքում կորցնելով տեղացիների ստեղծած դարավոր մշակութային ժառանգությունը:

Ցեղասպանությունից հետո Հայաստան գաղթած հայերի մի խումբ հաստատվեց Երեւանում, եւ մայրաքաղաքի համայնքներից մեկն այսօր կոչվում է Մալաթիա:

ՀԱՄԼԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մալաթիա,

Արեւմտյան Հայաստան

ԱԶԳ **Միջազգային**

Վրաստանի ԱԳՆ-ում ղարաբաղյան հակամարտության «մասնակիցներին» չգիտեն

Հարավկովկասյան երկրների լրատվամիջոցներից թերեւս վրացականն է, որ այնքան է հետաքրքրված, շատ դեմքերում՝ ներքաշված ներքին քաղաքականության ու ընդհանրապես ներքին կյանքին առնչվող հարցերում, որ տարածաշրջանին անդրադառնալու անգամ կարեւոր առիթները աչքաթող է անում, եթե, իհարկե, այդ նույն հարցերը չեն կարող ազդել Վրաստանի ներքին իրավիճակի վրա: Դրա համար էլ պատահական չէ, որ հակահայկական տրամադրություններ տարածող հրապարակումները որպես կանոն հայտնվում են ադրբեջանական «սնուցման» շնորհիվ:

Սակայն խոսքը տվյալ դեպքում ադրբեջանա-վրացական հարաբերությունների մասին չէ, այլ ամենից առաջ այն իրողության, որ երբ տարածաշրջանում նախորդ շաբաթ գրեթե ամեն օր հրապարակումներ էին լինում հայ եւ ադրբեջանցի զինվորների սպանությունների, «դժբախտ պատահարների» մասին, Վրաստանում այդ ամենին արձագանքում են այնպիսի ուշացմամբ, որ վկայում է իրենցից բացի մնացյալի նկատմամբ «մեծահոգի անտարբերության» առկայությունը:

Ամեն դեպքում, գրեթե բոլոր հարթակներից մտահոգություն հնչեցնող թերեւս եվրոպացի եւ ամերիկացի չինովնիկներից հետ չմնալու մարմաջով վրացական կողմն էլ երեկ անդրադարձել է շփման գծի ու Հայաստան-Ադրբեջան սահմանի միջադեպերին, իհարկե, վրացականի ու աբխազա-հարավօսական խնդրի «տիրոջ» տեսանկյունից: Մասնավորապես, «հայ-ադրբեջանական սահմանին» վերջին օրերին «ինտենսիվ մարտերի» առնչությամբ Վրաստանի փոխարտգործնախարար Նինո Կալանդաձեն հայտարարել է, թե ղարաբաղյան հակամարտությունը չի նպաստում տարածաշրջանի անվտանգությանը:

Նորություն չէ, որեւէ հակամարտություն չի կարող նպաստել որեւէ տարածաշրջանի անվտանգությանը, սակայն հարավկովկասյան տարածքում առնվազն երեք հակամարտություն է հաշվվում, այնպես որ անվտանգությանը չնպաստելու հարցում վրացի արտգործնախարարը կիսաս է խոսում:

Մյուս կողմից, ըստ փոխարտգործնախարարի խոսքերի, «Բոլոր մասնակից երկրները (նկատի ունի հակամարտության մասնակից երկրներ, ասել է թե՝ Հայաստան եւ Ադրբեջան այն դեպքում, երբ այսօրինակ գնահատումը զուտ ադրբեջանական դիրքորոշման կրկնություն է, ինչը Վրաստանի ԱԳ նախարարի տեղակալի որոշելիքը չէ հաստատպես - Ա.Հ.) գիտակցում են, թե որքան բարդ է խնդիրը, թե ինչով կարող է դա ավարտվել տարածաշրջանի համար, թե որքան ցավոտ հարց կարող է դառնալ նաեւ տարածաշրջանում պետությունների զարգացման տեսանկյունից»: «Ուստի ես խորապես վստահ եմ, որ երկու երկրներն էլ (մոռանալով, որ Արցախն է այս հարցի հիմնական կողմը - Ա. Հ.) համարժեք կգնահատեն իրավիճակն ու միջոցներ կձեռնարկեն աղետվելու անվտանգությունը», նշել է վրաց փոխարտգործնախարարը, չմոռանալով, սակայն, հավելել, թե երկու երկրների, այսինքն՝ Հայաստանի ու Ադրբեջանի հետ Վրաստանն ունի ինտենսիվ կապեր:

Նշենք, որ նույն թեմային կարճմիտ մեկնաբանություններով անդրադարձել են նաեւ որոշ վրացական քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, որոնց խոսքում հակառուսականն այնքան է գերակշռում, որ բուն խնդիրն առանձնակի կարեւորություն չի ստանում, թերեւս միայն այն դիտարկմամբ, թե պատերազմի վերսկսման դեպքում ռուսաստանյան զինուժը պետք է որ անցնի Վրաստանի տարածքով, որպեսզի Ռուսաստանը կարողանա աջակցել իր ռազմավարական գործընկեր Հայաստանին:

Ինչեւէ, Վրաստանը, առավել եւս որեւէ մեկն այս տարածաշրջանում, բավականին «քարտ հիշողություններ» ունի պատերազմ վերսկսելու հետեւանքների առնչությամբ: Ուստի այս երկրի արտաքին գերատեսչությունը կարող էր դատարկախոս հայտարարության ու ղարաբաղյան հակամարտության կողմերի ու հակամարտողների մասին ընդհանրապես ադրբեջանամետ դատողություններ անելու փոխարեն բավարարվել արդեն սանդարտ «մտահոգություն» արտահայտել, ինչն, ի դեպ, չի արվել, ապա նաեւ հակամարտությունների սրման դեպքում տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող քայլերից զերծ մնալու կոչերով՝ հասցեագրված հասկանալի է, թե երկու հարեւաններից հատկապես ում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սիրիական ընդդիմության առաջնորդը միջամտության կոչ է անում

Սիրիական ընդդիմության խոշորագույն միավորման՝ «Սիրիական ազգային խորհրդի» նոր առաջնորդ Աբդել Բասսեթ Սիդան հայտարարել է, թե նախագահ Բաշար Ասադի վարչակարգը «վերջին շնչում» է եւ արդեն կորցրել է երկրի որոշ քաղաքների վերահսկողությունը:

Շվեդիայում ապրող 56-ամյա քուրդ ակտիվիստը «Սիրիական ազգային ճակատի» նոր ղեկավարը դարձավ հունիսի 9-ին Ստամբուլում կայացած ճակատի գլխավոր քարտուղարության համագումարում: Հենց Թուրքիայում հիմնավորված այդ կազմակերպությունը միավորում է Ասադի հրաժարականը պահանջող յոթ ընդդիմադիր շարժումներ:

Սիդան համաշխարհային տերություններին կոչ է արել «նախագահ Ասադից» պաշտպանել խաղաղ քաղաքացիներին: Նա ՄԱԿ-ին խնդրել է ձեռնարկել ուժային գործողություն, դիմելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխին (նախատեսում է ինչպես պատժամիջոցների, այնպես զինված ուժերի կիրառություն): «Եթե Անվտանգության խորհուրդը համաձայնության չհասնի, ապա որոշ երկրներ կարող են գործողություններ սկսել առանց ՄԱԿ-ի մանդատի», հայտարարել է սիրիական ընդդիմության քուրդ առաջնորդը:

Մինչդեռ Մոսկվայում կարծում են, որ Սիրիայի գործերին միջամտելը «կհանգեցնի անկանխատեսելի հետեւանքների, որոնք կվնասեն տարածաշրջանի բազմաթիվ երկրների»: Այդ մասին շաբաթ օրը հայտարարեց ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը: Մոսկովյան ճեպասուլիսում նա լրագրողներին պատմեց, որ Դամասկոսում գնդակոծվել է ռուսաստանցի մասնագետների ավտոբուսը, ինչպես նաեւ այն շենքը, որտեղ բնակվում են ռուսաստանցի մասնագետները: Բարեբախտաբար, մարդկային զոհեր չկան, ասել է նա:

«Ալ Արաբիա» հեռուստալիքը հաղորդում է, որ սիրիացի խռովարարները հունիսի 10-ին Հոմս քաղաքի շրջանում իրենց վերահսկողության տակ են առել օդուժի ռազմակայանը: Հեռուստալիքի տվյալներով, ռազմական օբյեկտում եղած զինվորների մեծ մասը փախուստի է դիմել: Ընդդիմության տարածած տեղեկությունների համաձայն, նույն օրը Հոմսի նահանգում կառավարական զորքերը գնդակոծել են ապստամբների հենակետերը: Գնդակոծության հետեւանքով սպանվել է 19 մարդ:

Ֆրանսիայի խորհրդարանական ընտրություններում հաղթեցին ձախերը

Կիրակի օրը Ֆրանսիայում անցկացվել է խորհրդարանական ընտրությունների առաջին փուլը, որն ավարտվել է ձախակողմյան ուժերի հաղթանակով: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող բնակչության 60 տոկոսը:

Արդեն կարելի է ասել, որ Ֆրանսիան ունի ոչ միայն սոցիալիստ նախագահ (Ֆրանսուա Օլանդ), այլեւ սոցիալիստներին ենթակա խորհրդարան: Սոցիալիստական կուսակցությունը ստացել է բոլոր քվեների 34,5 տոկոսը: Նրա դաշնակից «Կանաչները» ստացել են 5,4 տոկոս, կոմունիստական «Ձախ ճակատը»՝ 6,7 տոկոս: Ընդհանուր առմամբ ձախակողմյան ուժերը ստացել են քվեների 47 տոկոսը: Անշուշտ, ընտրությունների երկրորդ փուլը կբերի հավելյալ տոկոսներ: Բայց ամեն դեպքում, փորձագետների կարծիքով, սոցիալիստները ստիպված են դաշինք կնքել ձախակողմյան մյուս ուժերի հետ, որպեսզի ԱԺ-ում ամուր դիրքեր ունենան:

Ենթադրվում է, որ 577 տեղով խորհրդարանում սոցիալիստները եւ նրանց մերձավոր դաշնակիցները կունենան 283-ից մինչեւ 329 տեղ:

Նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիի կենտրոնամետ «Ժողովրդական շարժման միությունը» ստացել է 27,2 տոկոս եւ խորհրդարանում կարող է ունենալ 210-ից մինչեւ 263 տեղ: Մարին Լը Պենի ծայրահեղ աջ «Ազգային ճակատը» ստացել է քվեների մոտ 14 տոկոսը եւ խորհրդարանում կարող է ունենալ մինչեւ 3 տեղ:

Հունիսի 17-ին խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլին կմասնակցեն հունիսի 10-ին առնվազն 12,5 տոկոս ստացած քաղաքական ուժերը: Սպասվում է, որ գլխավոր աջակողմյան ուժը՝ «Ժողովրդական շարժման միությունը» խորհրդարանում կկորցնի ներկայիս մեծամասնությունը եւ կդառնա ընդդիմություն: Չնայած ծանր վիճակին, կուսակցության առաջնորդներ Ֆրանսուա Ֆիյոնը եւ Ժան-Ֆրանսուա Կոպեն արդեն հայտարարել են, թե ոչ մի «գերագույն նկատառում» իրենց չի ստիպի միավորվել ծայրահեղ աջ «Ազգային ճակատի» հետ:

Իսպանական բանկերը ԵՄ-ից կստանան մոտ 100 մլրդ եվրո

Իսպանիան որոշել է Եվրոմիությունից պաշտոնապես արտակարգ ֆինանսական օգնություն խնդրել իր բանկերի վերակապիտալացման նպատակով: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսս գործակալությունը, հիմք ընդունելով Իսպանիայի ֆինանսների նախարար Լուիս դե Գուինդոսի հայտարարությունը:

Նախարարի խոսքերով, ֆինանսական օգնության հատկացումը Իսպանիայի կառավարությունից չի պահանջի սանձնել բյուջեի ծախսերի կրճատման պարտավորություններ: Դե Գուինդոսը մանրամասնել է, որ օգնությունն իրենից կներկայացնի իսպանական բանկերին արտոնյալ պայմաններով տրվող վարկեր. պայմանները կսահմանվեն ավելի ուշ:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ եվրոպական պետությունների ֆինանսների նախարարները ավելի վաղ՝ հունիսի 9-ին հավանություն էին տվել մինչեւ 100 մլրդ եվրո օգնության հատկացմանը: Ֆրանսպրեսի տվյալներով, ճշգրիտ գումարը հայտնի կդառնա մինչեւ հունիսի 21-ին՝ միջազգային անկախ աուդիտորների հաշվարկներից հետո:

Եվրոխմբի ֆինանսների նախարարների հայտարարության մեջ նաեւ նշվում է, որ օգնությունը կհատկացվի ֆինանսական կայունության եվրոպական հիմնադրամից: ԱՄՀ-ն, որքան Իսպանիան խնդրել էր օգնությունը հասցնել նվազագույնի, վերջին հաշվով կսահմանափակվի բանկային հատվածի բարեփոխումների դիտորդի դերով:

Մուբարաքը կոմայի մեջ է

Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքը Կահիրեի մերձակա Թորա բանտում երեկ հետմիջօրեին ընկել է կոմայի մեջ: Ավելի վաղ բժիշկները նրա վիճակը գնահատել էին որպես օրհասական: Վերջին օրերին նրա առողջությունը կտրուկ վատթարանում էր, հաղորդում է BBC-ն:

84-ամյա Մուբարաքին վերջերս բուժում են ոսկրածուծային ակադեմիայի հիվանդանոցի մասնագետները: Բժիշկների խորհուրդը օրերս եզրակացրել էր, որ նա նախաինսուլտային վիճակում է, եւ հանձնարարել էր նրան տեղափոխել զինվորական հոսպիտալ կամ Միջազգային բժշկական կենտրոն: Առայժմ հարցը մնում է չլուծված:

Վերջերս Մուբարաքի կողքին է նրա կրտսեր որդի Գամալը, երեկվանից՝ նաեւ ավագ որդի Ալը:

Հունիսի 2-ին Եգիպտոսի դատարանը Մուբարաքին ցմահ բանտարկության դատապարտեց 2011-ի սկզբներին նրա կառավարման դեմ ուղղված ապստամբության ճնշման ժամանակ մոտ 850 մարդու սպանության համար:

Թուրքիայում ուժեղ երկրաշարժ եւ կրկնության վտանգ

Ռուսական Becmu ռադիոկայանը հաղորդում է, որ Թուրքիայի հարավ-արեւելքում գտնվող Մուղլայի նահանգում՝ միջերկրածովյան ափից ոչ հեռու, հունիսի 10-ին տեղի ունեցած 6 մագնիտուդով երկրաշարժը կարող է կրկնվել: Նման կարծիք են հայտնել սեյսմագետները: Հունիսի 10-ին ցնցումները շարունակվել էին մոտ 30 վայրկյան, ապա տեղի էին ունեցել յոթ ավելի թույլ ցնցումներ: Դրանք որոշակիորեն զգացվել էին մի շարք առողջավայրերում, մասնավորապես Մարմարիսում, Ֆեթիհիեում, Անթալիայում: Կիրակի օրը ոչ ոք չէր զոհվել, բայց 60 մարդ դիմել էր հիվանդանոց: Երկրաշարժը նյութական լուրջ վնաս չէր պատճառել:

Ռաֆայել Նազարյան. «Անդորրայի հետ դժվարին խաղ է սպասվում»

Ֆուտբոլի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում այսօր Հայաստանի երիտասարդական հավաքականը կիյուրընկալի 3-րդ խմբի բացահայտ հետնապահ Անդորրայի ընտրանուն, որը բոլոր 7 հանդիպումներում էլ պարտվել է: Խաղը կսկսվի Երևանի ժամանակով ժամը 20-ին: Ավանդույթի համաձայն խաղի նախօրեին երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը «Հանրապետական» մարզադաշտում հանդիպեց լրագրողներին:

Նա տեղեկացրեց, որ ուսումնամարզական հավաքն անցնում է ծրագրին համապատասխան, բոլոր 25 ֆուտբոլիստներն էլ պատրաստ են խաղադաշտ դուրս գալու: Իսկ թե ովքեր կընդգրկվեն խաղի հայտացուցակում, պարզ կդառնա այսօր առավոտյան: Մեծ թվով ֆուտբոլիստների ընդգրկումն ուսումնամարզական հավաքում գլխավոր մարզիչը բացատրեց այն բանով, որ նրանցից ոմանք իրավունք ունեն մասնակցելու նաեւ ընտրական հաջորդ մրցափուլին, ուստի այժմվանից հարկավոր է նրանց ծանոթացնել հավաքականի մթնոլորտին: Ըստ Ռաֆայել Նազարյանի, հավաքականի բոլոր ֆուտբոլիստներն էլ լավ մարզավիճակում են: Ճիշտ է, Մասիս Ոսկանյանի եւ Գեւորգ Բաղալյանի համար արտերկրի առաջնություններն արդեն ավարտվել են, սակայն նրանք մարզումների շնորհիվ պահպանել են իրենց մարզավիճակը:

Ռաֆայել Նազարյանը նշեց, որ Անդորրայի հավաքականի հետ անցած տարի կայացած հանդիպումը մեր ընտրանու ամենադժգույն խաղն էր, որում հաղթանակը շատ դժվարությամբ տրվեց: Ուստի մարզիչն իր սաներին զգուշացրել է, որ անդորրացիների հետ խաղը դժվար է լինելու, ոչ մի դեպքում չպետք է թերագնահատել մրցակցին: Ընդհանրապես մեր ֆուտբոլիստների համար միշտ էլ դժվար է զանգվածային պաշտպանությանն ադավինող թիմերի դեմ խաղալը: Ուստի մարզիչը գտնում է, որ հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ է դրսեւորել կենտրոնացվածություն, տրամադրվածություն ու գործել մեծ արագությամբ:

Հետադարձ հայացք գցելով ընտրական մրցաշարում մեր հավաքականի անցած ուղուն, գլխավոր մարզիչը նշեց, որ հաջող մեկնարկից հետո խաղային անկում նկատվեց Չեխիայի եւ Ուելսի հավաքականների հետ անցկացած վերջին 2 հանդիպումներում: Պատճառներից մեկը ֆուտբոլիստների հոգնածությունն էր, մանավանդ որ այդ խաղերը կայացան ընդամենը 4 օրում: Այդ հանդիպումները նաեւ ցույց տվեցին, որ հավաքականն այնքան էլ լիարժեք փոխարինողներ չունի, որոնք ունակ լինեն ուժեղացնելու խաղը: Մարզիչը չբացառեց, որ առաջիկայում երիտասարդական հավաքականում հնարավոր է նոր ֆուտբոլիստներ հայտնվեն: Նա շատ կարեւորեց ընկերական հանդիպումների կազմակերպումը, որը մինչեւ օրս չի հաջողվում իրականացնել: Նազարյանը հույս հայտնեց, որ Ուելսի հավաքականի հետ խաղից առաջ կհաջողվի գոնե մեկ ընկերական հանդիպում անցկացնել:

Անդրադառնալով Եվրո-2012-ում ՀՀ հավաքականի առաջիկա մրցակիցների խաղին, Ռաֆայել Նազարյանը նկատեց, որ Իտալիան իր կարծիքով վերջին 10 տարիների լավագույն հավաքականն ունի այժմ: Գլխավոր մարզչին առայժմ ամենաշատը դուր է եկել Իտալիա-Իսպանիա խաղը: Դանիայի հավաքականը շատ կազմակերպված, արագ գործող թիմ է, իսկ չեխերի մասին ընդհանուր կարծիք Ռաֆայել Նազարյանը դեռեւս չի կազմել: Ըստ նրա ռուսների դեմ չեխերը լավ չխաղացին, չկարողացան դրսեւորել խաղային իրենց որակները:

«Ուլիսը» ռեւանշի հասավ

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում կայացավ 2 հանդիպում: Արարատի «Այգ» մարզաբազայում «Իմպուլսը» հյուրընկալել էր «Գանձասարին»: Արդեն 5-րդ րոպեին հյուրերից Դիեգո Լոմբան տուգանային հարվածով բացեց հաշիվը: «Իմպուլսին» պարտությունից փրկեց մակեդոնացի Ֆիլիպ Տիմովը, որը ավելացված ժամանակում խփեց պատասխան գնդակը: Ընթացիկ առաջնությունում դա Տիմովի 6-րդ գոլն էր: Այդ ցուցանիշով նա հավասարվեց առաջնության լավագույն ռմբարկուներ Նորայր Գյոզալյանին եւ Անդրանիկ Բարիկյանին:

Երկրի չեմպիոն «Ուլիսը» հյուրընկալել էր առաջնության հետնապահ «Արարատին», որը 7 անընդմեջ պարտություն էր կրել: Առաջին շրջանում այս թիմերի մրցավեճն ավարտվել էր արարատցիների հաղթանակով՝ 2-1: Դա «Արարատի» միակ հաղթանակն է ընթացիկ առաջնությունում: Եվ ահա «Ուլիսը» վստահ ռեւանշի հասավ: Չեմպիոնը առաջին 18 րոպեներին վճռեց հանդիպման ելքը: 2 անգամ աչքի ընկավ «Ուլիսի» բոլոր տարիների լավագույն ռմբարկու Արսյոմ Ադամյանը, մեկ գոլ էլ խփեց Շոթա Ձիքիան: Միայն 2-րդ խաղակեսում արարատցիներից Ավետիք Կիրակոսյանը «թրջեց» հաշիվը՝ 3-1: Նշենք, որ նախորդ 5 խաղերում «Արարատին» չէր հաջողվել գրավել մրցակիցների դարպասները:

Այս հաղթանակի շնորհիվ «Ուլիսը» վաստակեց 10 միավոր եւ շրջանցելով «Բանանցին», տեղ զբաղեցրեց 6-րդ հորիզոնականում: «Արարատը» 3 միավորով շարունակում է եզրափակել աղյուսակը: Առաջատարը «Միկան» է, որը 11 խաղում վաստակել է 26 միավոր: 2-րդ տեղում ընթացող «Իմպուլսը» 12 խաղում 23 միավոր է վաստակել: 20 միավորով (11 խաղից) 3-րդ տեղում է ընթանում «Գանձասարը»:

Շարապովան եւ Նադալն ուժեղագույնն են «Ռոլան Գարոսում»

Ռուսաստանցի Մարիա Շարապովան պրոֆեսիոնալ թենիսիստուհու իր կարիերայում առաջին անգամ հաղթող ճանաչվեց թենիսի Ֆրանսիայի բաց առաջնությունում՝ եզրափակիչում 6-3, 6-2 հաշվով պարտության մատնելով իտալուհի Սառա Էրանիին: Նախկինում Շարապովան մեկական անգամ հաղթող էր ճանաչվել «Մեծ սաղավարտի» մյուս 3 մրցաշարերում՝ «Ուիմբլդոնում» (2004-ին), ԱՄՆ-ի (2006-ին) եւ Ավստրալիայի (2008-ին) բաց առաջնություններում: «Ռոլան Գարոսում» տոնած հաղթանակի շնորհիվ Շարապովան գլխավորեց թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակը:

Տղամարդկանց մրցաշարի մենախաղում գլխավոր մրցանակը վիճարկեցին Ռաֆայել Նադալն ու Նովակ Ջոկովիչը: 4-րդ խաղափուլի սկզբում հորդառաս անձրեւի պատճառով մրցախաղը հետաձգվեց ու շարունակվեց հաջորդ օրը: Հաջողությունն ուղեկցեց Ռաֆայել Նադալին (6-4, 6-3, 2-6, 7-5), որը 7-րդ անգամ նվաճեց Ֆրանսիայի չեմպիոնի տիտղոսը: Ընդ որում նա 2005-2008-ին անընդմեջ հաղթող է ճանաչվել եւ միայն 2009-ին Ռոջեր Ֆեդերերին է հաջողվել խախտել Նադալի մենիշխանությունը: Սակայն վերջին 3 տարիներին իսպանացի թենիսիստը կրկին ուժեղագույնն է «Ռոլան Գարոսում»:

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

Հայաստանի 23-րդ օլիմպիականն Արսեն Սարգսյանն է

Արտաշատում անցկացված թեթեւատլետիկայի Հայաստանի առաջնությունում գերազանց ելույթ ունեցավ վանաձորցի հեռացատկորդ Արսեն Սարգսյանը: Մարզիչ Սեդրակ Դալլաֆյանի 27-ամյա սանը հեռացատկեց 8 մ 20 սմ, ինչը 10 սմ-ով գերազանցում է օլիմպիական վարկանիշը: Արսենը Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք ստացավ: Նա հայաստանցի 4-րդ թեթեւատլետն է, որ մասնակցելու է օլիմպիական խաղերին: Լոնդոնում հանդես կգան 2-ական հեռացատկորդ եւ նիզականետորդ: Իսկ ընդհանուր առմամբ Հայաստանն արդեն 23 օլիմպիական ունի:

Արսեն Սարգսյանը 2011-ի դեկտեմբերից մինչեւ այս տարվա մայիսի 16-ը Մոսկվայում համատեղ մարզվել է Ռուսաստանի առաջատար թեթեւատլետների հետ: Եվ ինչպես տեսնում ենք, այդ մարզումները ցանկալի արդյունք տվեցին:

Արտաշատում հաջող ելույթ ունեցավ Լոնդոնի օլիմպիադային նախապատրաստվող մեր նիզականետորդ Մելիք Ձանոյանը: Նա առաջին իսկ փորձից հասեց 80 մետրի սահմանագիծը: Ճիշտ է, Մելիքը նիզակը նետելու պահին անզգուշորեն ոտնաթաթով խախտեց սահմանագիծը եւ արդյունքը չգրանցվեց: Ամեն դեպքում մրցումները ցույց տվեցին, որ Մելիք Ձանոյանը մեծ ներուժ ունի եւ կարող է օլիմպիական խաղերում հաջող ելույթ ունենալ:

Գեւորգ Սահակյանը ճանաչվեց լավագույնը

Մոսկվայում անցկացված օլիմպիական չեմպիոն Նիկոլայ Բալբոչինի անվան հունահռոմեական ըմբշամարտի միջազգային մրցաշարում Հայաստանից հաջող հանդես եկավ Գեւորգ Սահակյանը: Մինչեւ 66 կգ քաշային ըմբիշը 4 գոտեմարտերում էլ հաղթելով մրցակիցներին, գրավեց 1-ին տեղը: Նա նաեւ ճանաչվեց մրցաշարի լավագույն ըմբիշ:

Հաղթական մեկնարկը շարունակություն չունեցավ

Մոսկվայում ընթացող Միխայիլ Տալի հուշամրցաշարի հաղթական մեկնարկից հետո Լեւոն Արոնյանը 2-րդ տուրում սեւերով հաշտություն կնքեց Եվգենի Տոմաշեւսկու հետ, իսկ հաջորդ պարտիայում անսպասելի պարտություն կրեց մրցաշարի մասնակիցներից ամենացածր վարկանիշն (2706) ունեցող Լյուկ Մակշեյնից:

3 տուրից հետո Արոնյանը 1,5 միավորով Մագնուս Կառլսենի հետ բաժանում է 4-5-րդ տեղերը: 2,5-ական միավորով առաջատարներն են Ալեքսանդր Մորոզեւիչն ու Թեյմուր Ռաջաբովը: Մորոզեւիչը ոչ-ոքի խաղաց Կառլսենի հետ եւ հաղթեց Ալեքսանդր Գրիշչուկին: Կառլսենը 3-րդ տուրում հաշտություն կնքեց Ֆաբիանո Կարուանայի հետ:

Երեկ մրցաշարի մասնակիցները հանգստանում էին, իսկ այսօր կանցկացնեն 4-րդ տուրի հանդիպումները: Մեծ հետաքրքրությամբ է սպասվում Լեւոն Արոնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի մրցավեճը, որում հայ գրոսմայստերը կխաղա սեւ խաղաքարերով: Կրամնիկն ունի 2 միավոր: Ուշադրության կենտրոնում կլինի նաեւ Մորոզեւիչի եւ Ռաջաբովի պարտիան:

Պետրոսյանը զիջեց առաջատարի դիրքը

Բուլղարիայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի վերջին 3 տուրերում անհաջող խաղաց միանձնյա առաջատար Տիգրան Պետրոսյանը՝ զիջելով դիրքերը: Մեկնարկում 4 անընդմեջ հաղթանակ տոնած հայ շախմատիստը 5-7-րդ տուրերում ընդամենը 1 միավոր վաստակեց: 5-րդ տուրում նրա հաղթաշարավը կասեցրեց էրվին Լ'Ամին՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի: 6-րդ տուրում Պետրոսյանն առաջին պարտությունը կրեց՝ սեւերով զիջելով Շանգլեյ Լուին: Հաջորդ պարտիայում նա հաշտություն կնքեց Կրասիմիր Ռուսեւի հետ: Պետրոսյանը 7 տուրից հետո 5 միավորով ընթանում է 12-րդ տեղում:

Հայ շախմատիստներից այժմ լավագույն արդյունքն ունի Հրանտ Մելքումյանը, որը 5,5 միավորով 9-րդ տեղում է: Նա գերազանց խաղաց վերջին 3 տուրերում՝ հաջորդաբար հաղթելով Խամդարիա Ակշատին, Դեշուն Քսիուին եւ Թամիր Նաբատուին: Հայ շախմատիստը կես միավորով է հետ մնում աղյուսակը գլխավորող Լեւենտե Վայդայից, Շանգլեյ Լուից, Հանս Տիկանենից, Շիլոնգ Լիից եւ Ալեքսանդր Իպատովից:

5-ական միավոր են վաստակել Կարեն եւ Ավետիք Գրիգորյանները, Վլադիմիր Հակոբյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Հրայր Սիմոնյանն ունի 4,5 միավոր, Հովհաննես Գաբրիելյանն ու Վլադիմիր Պողոսյանը վաստակել են 4-ական միավոր: Նրանց կես միավոր է զիջում Վահե Բաղդասարյանը, իսկ Նելլի Աղինյանն ունի 3 միավոր:

8-րդ տուրում Մելքումյանը սպիտակներով կմրցի Դրագան Սոլակի հետ: Պետրոսյանի մրցակիցը կլինի Կարեն Գրիգորյանը:

Ոչ-ոքիներ մեկնարկում

Էլինա Դանիելյանը Աննա Մուզիչուկի և Համոի Կոներուի հետ գրանցված ոչ-ոքիներով մեկնարկեց Կազանում սկսված շախմատի Գրան պրիի 4-րդ փուլում: 2 տուրից հետո Էլինան 1 միավորով 4-9-րդ տեղերն է բաժանում: 1,5-ական միավորով առաջատարներն են Ալեքսանդրա Կոստենյուկը, Ալիսա Գալյամովան եւ Աննա Մուզիչուկը:

Անսպասելի էր աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանի անհաջող մեկնարկը, որը նախ ոչ-ոքի խաղաց Համոի Կոներուի հետ, ապա պարտվեց մրցաշարի մասնակիցներից ամենացածր վարկանիշ (2333) ունեցող թուրք Բեթուլ Յիլմազին:

Ուժերը հավասար էին

Եվրո-2012-ի մրցումների հերթական օրը սկսվեց Անգլիայի եւ Ֆրանսիայի հավաքականների մրցախաղով: Հավասար պայքարում անցած հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1: Առաջինը հաջողության հասան անգլիացիները, երբ Լեսկոտը գլխի հարվածով բացեց հաշիվը: Սակայն անգլիացիների ուրախությունը երկար չտեւեց: Ընդամենը 9 րոպե անց ֆրանսիացի Սամիր Նասրին վերականգնեց հավասարակշռությունը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ZVARTNOTS

ARMENIA INTERNATIONAL AIRPORTS

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ»

ընկերությունը 10 տարեկան է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հասանելի է ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ՊԲԱՀՇԶԲ-12/111 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012թ. հունիսի 08-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ՊԲԱՀՇԶԲ-12/111

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել կապալային աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի տարածքում գտնվող, պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող «Լոռի բերդ» ամրոցի պարսպապատի հյուսիս-արևելյան հատվածի ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքների ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2012 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձևով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 10:00-ն, և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/ը հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, հեռ. 58 51 78

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ (նախկին ՍՊԸ) խորհրդին

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենթարկել «Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցներիհոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը ցլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ նշում

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի համադրելի տվյալներն աուդիտ չեն անցել:

Էնդրյու Քոֆսել — ***Տիգրան Գասպարյան***
Տնօրեն — ***Աուդիտի բաժնի ղեկավար***

«Էնդյ-Փի-Էն-Ջի Արմենիա» ՓԲԸ
26 ապրիլի 2012թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Տոկոսային եկամուտ	1,478,601	78,588
Տոկոսային ծախս	(174,992)	(903)
Զուտ տոկոսային եկամուտ	**1,303,609**	**77,685**
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(1,269)	(2)
Այլ գործառնական եկամուտ	180,974	284,114
Այլ գործառնական ծախսեր	(6,067)	(3,006)
Գործառնական եկամուտ	**1,477,247**	**358,791**
Արժեզրկումից կորուստներ հաճախորդներին տրված վարկերի գծով	(35,656)	(18,260)
Աշխատակազմի գծով ծախսեր	(438,397)	(99,947)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(149,813)	(31,721)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	**853,381**	**208,863**
Շահութահարկի գծով ծախս	(171,083)	(41,855)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար	**682,298**	**167,008**

Գագիկ Վարդանյան — ***Ալեքսանդր Սահակյան***
Գործադիր տնօրեն — ***Գլխավոր հաշվապահ***

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	247,236	458,886
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	1,076,778	-
Հաճախորդներին տրված վարկեր	4,632,359	2,381,399
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	72,556	7,752
Այլ ակտիվներ	32,963	2,201
Ընդամենը ակտիվներ	**6,061,892**	**2,850,238**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	2,405,053	149,831
Ընթացիկ հարկային պարտավորություն	125,386	48,235
Հետաձգված հարկային պարտավորություն	366,970	61,125
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	262,520	1,609,492
Այլ պարտավորություններ	77,675	353,689
Ընդամենը պարտավորություններ	**3,237,604**	**2,222,372**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	500,000	180,000
Լրացուցիչ կապիտալ	1,474,982	280,858
Չբաշխված շահույթ	849,306	167,008
Ընդամենը սեփական կապիտալ	**2,824,288**	**27,866**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**6,061,892**	**2,850,238**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	1,175,060	60,536
Վճարված տոկոսներ	(47,357)	-
Զուտ վճարումներ արտարժույթով գործառնությունների գծով	(1,254)	(3)
Ստացված զուտ այլ եկամուտ/(ծախս)	174,907	281,108
Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ	(573,274)	(103,457)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	(1,024,441)	-
Հաճախորդներին տրված վարկեր	(1,990,577)	(2,377,129)
Այլ ակտիվներ	89	(1,151)
Գործառնական պարտավորությունների աճ		
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	687,281	1,609,492
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ նախքան շահութահարկի վճարումը	**(1,599,566)**	**(530,604)**
Վճարված շահութահարկ	(86,618)	(2,709)
Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցներիհոսքեր	**(1,686,184)**	**(533,313)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(74,983)	(7,799)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**(74,983)**	**(7,799)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	1,793,615	500,000
Վարկերի և փոխառությունների մարում	(239,177)	-
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	-	500,000
Ֆինանսավորմանգործունեությամբստացված դրամական միջոցների հոսքեր	**1,554,438**	**1,000,000**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում) աճ	(206,729)	458,888
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,921)	(2)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբիդրությամբ	458,886	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**247,236**	**458,886**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Չբաշխված շահույթ հազ. դրամ	Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ
Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ)(աուդիտ չանցած)	-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար (աուդիտ չանցած)	-	-	167,008	167,008
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ				
Թողարկված բաժնեմասեր (ծնթգ. 17) (աուդիտ չանցած)	180,000	-	-	180,000
Լրացուցիչ կապիտալի աճ՝ Բաժնետիրոջ կողմից ուկրայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունքում՝ առանց 70,215 հազար դրամ հետաձգված **հարկի (ծնթգ. 14) (աուդիտ չանցած)**	-	**280,858**	-	**280,858**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ (աուդիտ չանցած)	**180,000**	**280,858**	-	**460,858**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)	**180,000**	**280,858**	**167,008**	**627,866**

Գագիկ Վարդանյան — ***Ալեքսանդր Սահակյան***
Գործադիր տնօրեն — ***Գլխավոր հաշվապահ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: